Արձանագրություն N 3
ՓԱԲ-ԳՀԾՁԲ-19/01 ծածկագրով գնանշման հարցման
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 19 մարտի 2019թ.
ժամը 11:45

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Նախագահ՝ Գ. Մարտիրոսյանը
անդամներ՝ Մ. Ստեփանյանը, Ռ. Հարությունյանը, Դ. Դալլաքյանը
քարտուղար՝ Ա. Մկրտչյանը

I. Ընթացակարգի հայտի գնահատման արդյունքների մասին
(Գ. Մարտիրոսյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ.

Հրավերով սահմանված ժամկետում գնահատման թերթիկները տրամադրվել են հանձնաժողովի անդամներին:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526 որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 44-րդ կետով սահմանված ժամկետում 18.03.2019թ. ստացվել կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված 13.03.2019թ. ուղարկված հարցման պատասխանը, ըստ որի մասնակիցների ներկայացրած հայտարարությունները համարվում է իրականությանը համապատասխանող:

1.2 13.03.2019թ. ծանուցմանն ի պատասխան 1-ին տեղ զբաղեցրած Ա/Ձ Ջանիկ Սևոյանի կողմից սահմանված ժամկետում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացվել է որակավորման չափանիշները հիմնավորող՝ ՓԱԲ-ԳՀԾՁԲ-19/01 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

1.3 հանձնաժողովի կողմից ուսումնասիրվեց Ա/Ձ Ջանիկ Սևոյանի կողմից ներկայացված «ՓԱԲ-ԳՀԾՁԲ-19/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված առաջին տեղը զբաղեցրած մասնակցի որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը (համանման (նմանատիպ) պայմանագրի և դրա հաշիվ վավերագրի, ինչպես նաև այդ պայմանագրի կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն) և այլ փաստաթղթերի պատճենները) և արձանագրվեց հետևյալը.

ա/ «ՀՀ փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ա/Ձ Ջանիկ Սևոյանի միջև 2018 թվականի հոկտեմբերի 16-ին կնքված «ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԱՄ ԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՓԱԹԵԹԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ» N ՀՀՓԿ-ԳՀԾՁԲ-(18/1-Ծ) պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) N 1 հավելվածում ծառայության մատուցման ժամկետը նշված է «Մատուցումն իրականացվում է պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20-րդ օրացուցային օրվա ընթացքում...», ուստի հաշվի առնելով պայմանագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվը (16.10.2018թ.)՝ ծառայության մատուցման վերջին օրը պետք է լիներ 05.11.2018 թվականը, այն ինչ երկկողմանի հաստատված պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձնման-ընդունման N 01 արձանագրությամբ (պայմանագրի N2 հավելված) և պայմանագրի արդյունքը պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ N 01 ակտով (պայմանագրի N2.1 հավելված) նշված է, որ ծառայությունը մատուցվել է (հանձնվել է) 21.11.2018 թվականին: Ա/Ձ Ջանիկ Սևոյանի կողմից չի ներկայացվել որևէ փաստաթուղթ Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետի երկարաձգման վերաբերյալ:

բ/ Պայմանագրի N 1 հավելվածում ծառայության չափման միավորը նշված է «դրամ», իսկ պայմանագրի արդյունքը պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ N 01 ակտում (պայմանագրի N2.1 հավելված) և 26.11.2018 թվականի դուրս գրված հաշիվ վավերագրում ծառայության չափման միավորը նշված է «հատ»:

գ/ Պայմանագրի 4.1 կետում նշված է մատուցման ենթակա ծառայության գինը՝ 2530000 (երկու միլիոն հինգ հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, այն ինչ ներկայացված 26.11.2018 թվականի դուրս գրված հաշիվ վավերագրում ծառայության արժեքը նշվել է առանց ԱԱՀ-ի:

դ/ Երկկողմանի հաստատված պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձնման-ընդունման N 01 արձանագրության (պայմանագրի N2 հավելված) առաջին էջում նշված է՝ «Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ 21.11.2018 թվականին դուրս գրված N Բ4190754019 հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին. ...», այն ինչ Ա/Ձ Ջանիկ Սևոյանի կողմից հանձնաժողովին ներկայացված հաշիվ վավերագրի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ վերջինս դուրս է գրվել 26.11.2018 թվականին, իսկ հաշիվ վավերագրի սերիան և համարն է Բ9729911184:

1.4 Ինչպես նաև 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից չի պահպանվել ՓԱԲ-ԳՀԾՁԲ-19/01 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի Հավելված 5-ի ձևաչափը:

1.5 Ելնելով վերը նշվածից հանձնաժողովը գտնում է, որ ներկայացված Պայմանագրի շրջանակներում մատուցված ծառայությունը չի կարող համարվել պատշաճ կատարված:

1.6 Տեղեկացնենք նաև, որ ՊՈԱԿ-ը դիմել է «ՀՀ փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ին վերոնշյալ պայմանագրի մասին տեղեկատվություն ստանալու նպատակով:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

2. Հիմք ընդունելով վերոգրյալը գնահատող հանձնաժողովը որոշեց.

2.1 մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և ՓԱԲ-ԳՀԾՁԲ-19/01 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7.19 կետի համաձայն ծանուցել առաջին տեղը զբաղեցրած Ա/Ձ Ջանիկ Սևոյանին, առաջարկելով ծանուցումն ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

2.2 հաջորդ նիստ հրավիրել արձանագրված անհամապատասխանությունները շտկելու համար տրամադրված ժամկետի լրանալու հաջորդող աշխատանքային օրը (21.03.2019թ), ժամը 11:45-ին ք. Երևան, Ծովակալ Իսակովի 24, 1-ին մասնաշենք, N204 սենյակ հասցեով:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Գ. Մարտիրոսյան

անդամներ՝ _____ Մ. Ստեփանյան

_____ Ռ. Հարությունյան

_____ Դ. Դալլաքյան

քարտուղար՝ _____ Ա. Մկրտչյան